ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան.

Ի պատասխան Ձեր 15.05.2019թ. հ.01/245 գրության՝ տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետի 04.05.2018թ. հ.1670-Ա որոշմամբ օրինականացվել է Թբիլիսյան խճուղու հ.18/5 հասցեում գտնվող ինքնակամ շինությունը՝ Արտաշես Ավետիսյանի անվամբ:

Երևան համայնքի անվամբ պետական գրանցման փուլում պարզվել է, որ վերոհիշյալ գույքը ժամանակին Թբիլիսյան խճուղու հ.25 հասցեով գրանցված է եղել «Հանքավան» ԼՏԸ հողամասի օգտագործման իրավունքը:

Հետագայում ընկերությունը լուծարվել է և ՀՀ կառավարության 24.12.2009թ. հ.1517-Ն որոշմամբ, հողամասն անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել է Երևան համայնքին:

Ներկայումս պատրաստվել է որոշման նախագիծ՝ Երևանի քաղաքապետի 04.05.2018թ. հ.1670-Ա որոշումը չեղյալ համարելու մասին, քանի որ հողամասը Թբիլիսյան խճուղու հ.25 հասցեով, արդեն փոխանցվել է Երևանի քաղաքապետարանին, որը իրավաբանական վարչության կողմից կասեցվել է:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ